ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

Վարդգես Սաֆարյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրՊՀ

Կարասային թաղումները հայտնի են աշխարհի մի շարք ժողովուրդների մոտ: Կարասի մեջ թաղման ծեսը հանդիպում է հին Եգիպտոսում և Միջագետքում (մ.թ.ա. IV-III հազարամյակ), Փոքր Ասիայում (մ.թ.ա. III- II հազ), Եվրոպայում այն հայտնի է Միջերկրական ծովի ժողովուրդների մոտ մ.թ.ա. III հազարամյակում: Երկարաժամկետ ընդմիջումից հետո կարասային թաղումները նորից հայտնվում են Փոքր Ասիայի արևմտյան մասում, Միջերկրական ծովի կղզիներում: Բալկանյան թերակղզու հարավում տարածում են գտնում մ.թ.ա. VII դ. և այստեղ գոյատևում մինչև մ.թ.ա. III դ.:[1]

Ըստ հնագիտական տվյալների՝ կարասային թաղումները Հայկական լեռնաշխարհ մուտք են գործել Հյուսիսային Միջագետքից՝ ուրարտական ժամանակաշրջանում:[2] Մ.թ.ա. IV-III դդ. սկսած դրանք տարածվում են լեռնաշխարհում՝ հյուսիսում մոտավոր սահման ունենալով Կուր գետը: Նրանց ամենալայն կենցաղավարման ժամանակը մ.թ.ա. վերջին և մ.թ. առաջին դարերն են, այսինքն ժամանակ, երբ վերջնականապես ձևավորվում է հայ էթնոտարածքը և մշակույթի էթնիկ դիմագիծը:[3] Հայաստանում կարասային թաղումներ հայտնի են մի շարք վայրերից՝ Արգիշտիխինիլի, Գառնի, Օշական, Արտաշատ և այլն[4]:

Կարասային թաղումները հետազոտված են Վրաստանում (Կողկիս, Իբերիա)[5]: Կողկիսի արևելյան մարզերում կարասային թաղումները տարածվում են մ.թ.ա. IV-III դդ.,[6] և շարունակում են գոյատևել նաև I-IV դդ. (գյուղեր Բանդզա, Դզվերի, Սայրխե և այլն)[7]:

Կարասային թաղումներ հայտնի են նաև ներկայիս Ադրբեջանի տարածքում՝ Միլի և Մուղանի տափաստաններում, Կասիմ Իսմայիլովի, Աղ-

---

[1] *Нонешвили А., Погребальные обряды народов Закавказья (Кувшинные погребения VIII в. до н.э.- VIII в.н.э. Тбилиси, 1992, с. 3-4.*

[2] *Мартиросян А., Аргиштишинили. с.50-55; Хачатрян Ж.Д. Гарни V, Ереван, 1976, с. 23-28, его же: Арташат, Ереван, 1981, с. 32.*

[3] *Պետրոսյան Հ., Կարասային թաղումների մասին զեկույցի թեզիսներ / ձեռագիր/:*

[4] *Древнейшие государства Кавказа и Средней Азии.В кн.- .Археология СССР, Москва, 1985, с.67,76.*

[5] *Նույն տեղը с.92,54,58.90-91.*

[6] *Նույն տեղը с54*

[7] *Նույն տեղը с.59*

ջաբեդիի, Ժդանովի, Եվլախի, Բարդայի, Մինգեչաուրի, Կարյագինի շրջաններում,[1] Նախիջևանի տարածքում,[2] այսինքն Կուր գետի աջ ափին:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ կարասային թաղումներ ֆիքսվել են նաև ձախափնյա մի քանի շրջաններում՝ Շաքիի, Մինգեչաուրի շրջաններում, որտեղ վաղուց ի վեր բնակվում էին հայերը՝ պատմական Կամբեջանը ու Գարդմանը: Այս դամբարաններում դիտվում է աջ ափին նմանատիպ հուղարկավորման ծիսակատարություն, ինչը վկայում է տվյալ մշակույթի կրողների էթնոմշակութային միասնության մասին:

Ուշագրավ է, որ դեռևս անցած դարի 60-ական թվականների սկզբին ադրբեջանական հետազոտողները Կուր գետի աջ և ձախ ափերի բնակչության միջև նկատում և նշում էին սկզբունքային էթնոմշակութային տարբերությունը:[3] Միևնույն ժամանակ, նրանք եզրահանգում են, որ խոսքը տարբեր աղվանական ցեղերի խմբերի մասին է, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ հնագիտական նյութերը ցույց են տալիս Կուր գետի կտրուկ էթնիկական սահման լինելը:[4] Հարցը կայանում է նրանում, որ կարասային թաղումների մեծամասնությունը բացահայտվել է Կուր գետի աջ ափին, իսկ նույն ժամանակաշրջանի (մ.թ.ա. IVդ - մ.թ. առաջին դարեր) ձախ ափի նյութական մշակույթը ներկայացված է այսպես կոչված «յալոյլուտեփե» մշակույթով: Իսկ, ինչպես նշում են հունա-հռոմեական և հայկական աղբյուրները, Կուր գետից հարավ ընկած տարածքներն այդ ժամանակ կազմում էին Մեծ Հայքի մասը:

Այդ իսկ առումով (Կուր գետի ձախ ու աջ ափերի բնակչության էթնոմշակութային դիմագիծը պարզաբանելու համար) կարասային թաղումների ուսումնասիրությունը բացարձակ նշանակություն է ձեռք բերում:

ԼՂՀ տարածքում կարասային թաղումներ պատահական բացվել են հայտնի մի շարք վայրերում՝ Ստեփանակերտ, Արմենավան, Ճանկաթաղ, Առաջաձոր, Ազոխ, Դրախտիկ, Շահումյանի շրջան և այլն:[5]

Դեռևս 1998թ. նոյեմբերին Մարտակերտի շրջանի Ճանկաթաղ գյուղի տարածքում, կապի գիծն անցկացնելու ընթացքում, պատահականորեն բացահայտվել են խոշոր կարասներ: Տեղանքի զննումը ցույց տվեց, որ

---

[1] *Голубкина Т., Четыре кувшинных погребения из Мингечаура. Изв. АН Азерб.ССР, Баку, 1956, № 3, с.73-87; Бунятов Т.Очерки азербайджанской археологии. Баку,1960,с.133.*

[2] *Древнейшие государства Кавказа и Средней Азии с.101,106*

[3] *Алиев К. Племена древней Кавказской Албании (1 в. до н.э. – 1 в. н.э.) автореферат канд.дисс., Л.,1962,с.11 Նույնը նշում են Ջ.Խալիլովը և ուրիշները*

[4] *Նույն տեղը, էջ 11-12*

[5] *Այսպես, 1939 թ. Ստեփանակերտ քաղաքի հարավ-արևմտյան մասում Յա. Հումմելի կողմից հետազոտվել են երեք կարասային թաղումներ, 1954 թ. միջին բրոնզին վերաբերող Ուզերլիկ-թեփե բնակավայրի պեղումների ժամանակ Կ. Կուշնարյովան հայտնաբերել է 4 կարասային թաղումներ, 1964 թ. Ստեփանակերտի հարավային ծայրամասում հայտնաբերվել են կարասային թաղումներ:*

ճանկաթաղ գյուղից երկու կմ հարավ-արևմուտք, «Մղրակեր» կամ «Մեղրակեր» վայրում տեղակայված է կարասային թաղումներով մի դամբարանադաշտ, որը զբաղեցնում է մոտ 600 քառ. մ տարածություն: Թաղման կարասները կողմնորոշված են արևելքից-արևմուտք՝ կարասների պսակը ուղղված է դեպի արևելք: Հանգուցյալը կարասի մեջ էր դրված կծկված վիճակում՝ գլուխը դեպի արևելք:

Թաղման կարասներից մեկը պատրաստված է ժապավենու եղանակով, ունի լայն վիզ (արտաքին տրամագիծը 50 սմ, ներսինը՝ 38 սմ), թեք կտրված պսակ, երկարացվող իրան և հարթ ու նեղ հատակ (վերջինիս տրամագիծը 15 սմ է): Կարասը հավասարաչափ է թրծված, գույնը կարմրավուն-վարդագույն, կավը ավազի խառնուրդով: Թաղման կարասի բարձրությունը 165 սմ է, առավելագույն տրամագիծը՝ 100 սմ, պատերի հաստությունը՝ 2-2,5 սմ: Լայն դուրս մղված պսակը ներքևի մասում զարդարված է ճզման եղանակով արված նախշով (Տախտակ I, 1): Կարասի առավել լայն մասով անցնում է ռելիեֆային զարդարված գոտի: Նմանատիպ կարասներ հայտնի են այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Գառնին, Օշականը և այլն:[1] Կարասը փակված էր ոչ մեծ սալով, որը գտնվել է նույն տեղում:

Դամբարանում հայտնաբերվել են արծաթե կլոր հայելու երեք բեկոր, գլանաձև ապակյա ուլունք, երկկոն քարե ուլունք, բրոնզյա մատանի, սեգմենտաձև չմիացվող ծայրերով բրոնզյա ականջող, բրոնզյա շղթա վեց օղակներից (Տախտակ I, 6):

Երկրորդ դամբարանի վերազննման ընթացքում, թաղման կարասից ոչ հեռու բացահայտվել են հելլենիստական շրջանում տարածված «օյնոխոյա» տիպի երկու միականթ սափորներ (Տախտակ I, 3): Քննարկվող տիպի գունազարդ խեցեղենու օրինակները հայտնի են Արմավիրից, Արտաշատից, Գառնիից, Դվինից, Հացավանից, Շիրակավանից, Կարճաղբյուրից, Գեղադիրից, Օշականից, Լուսակերտից և այլ վայրերից և թվագրվում են մ.թ.ա. II-I դդ.:

Ելնելով կարասային թաղումների ուսումնասիրման կարևորությունից՝ մեր կողմից, 2006թ. աշնանը, ճանկաթաղ գյուղի «Մեղրակեր» տեղամասում կարասային թաղումների դամբարանադաշտում իրականացվել են հնագիտական հետախուզական պեղումներ:

[1] *Древнейшие государства Кавказа и Средней Азии.В кн.- .Археология СССР, Москва, 1985, с.67,76*

Պեղումներ են կատարվել ավերված կարասներից 2 մ հարավ ընկած տարածքում: Պեղվող քառակուսու հյուսիս-արևելյան անկյունում՝ 0.58 սմ խորությամբ, ջարդված կճուճի մեջ, և նրա կողքին գտնվել են տարբեր ուլունքներ՝ սարդիոնե, պղնձե, ապակյա արծաթապատված, մածուկից (ընդամենը 79 հատ), ինչպես նաև երկաթյա մատանու կտոր: Հետաքրքիր են կավե ուլունքները, ագատից ուլունքը, ուլունքաշարը միացնող բաժանարարն (Տախտակ I, 4):

Պեղվող քառակուսում 0.8 մ խորությամբ բացվել է մեծ թաղման կարասը (երկարությունը՝ 1.65 մ, տրամագիծը լայն մասում՝ 1 մ, պսակի տրամագիծը՝ 50 սմ): Կարասը կողմնորոշված է արևմուտքից-արևելք՝ պսակով դեպի արևելք: Թաղման կարասի կողքին նույն խորությամբ արձանագրվել է մոխրի հետքեր, այրված ընկույզ: Կարասի բերանը փակված էր մի ուրիշ, ավելի փոքր երկկանթ կարասի ներքևի մասով (Տախտակ II, 1-2): Վերջինիս մյուս մասերը տեղադրված էին մեծ կարասի հատակի վրա և առավել լայն հատվածի ու պսակի տակ՝ բոլոր այն տեղերում, որոնք ճեղքեր ունեն. այդ հատվածներում մեծ կարասը ներսից սվաղված էր սպիտակավուն շաղախով՝ մոխրե ցեխով: Փոքր կարասի բերանի տրամագիծը դրսից 0.41 մ էր, ներսից՝ 0.34 մ, շուրթը ուղիղ է՝ դեպի դուրս թեքված, լայնությունը՝ 3.5 սմ, կարասի պատերի հաստությունը՝ 1.8-2.5 սմ:

Կմախքը կարասում տեղադրված էր խիստ կծկված վիճակում՝ աջ կողքի վրա, գլխով դեպի արևելք: Կարասում գտնվել են երկաթյա միակողմանի դանակ, խաղող մշակելու փոքր երկաթե մկրատի մաս, ãáñë երկաթյա օղակաձև ճարմանդ, երկու երկաթե կլորավուն իր (կոճակ), երկաթե մեխ ու ասեղ (Տախտակ II, 7):

Բացահայտված կարասից 3 մ հյուսիս դրվեց ոչ մեծ հետախուզական խրամատ /2 x 1 մ/: Արդեն իսկ 0.3 մ խորությամբ բացվեց մեծ կարասի երկու խոշոր բեկորներով ծածկված մարդու կմախք՝ կծկված, աջ կողքին, գլխով արևելք, ձեռքերը երեսի մոտ: Այդ կմախքից 0.8 մ արևելք նույն խորությամբ գտնվեցին ոչխարի ոսկորներ: Հաջորդ շերտը ոչ մի նյութ չէր պարունակում:

Պեղվող քառակուսուց մոտավորապես 60-70 մ հյուսիս-արևելք՝ հողհանքի տարածքում տեղի բնակիչները հողային աշխատանքների ընթացքում գտել են հելլենիստական շրջանին պատկանող սափորներ, թասեր: Հետախուզական աշխատանքների արդյունքում այս տարածքի արևմտյան մասում, ներկա ճանապարհից 3 մ արևելք՝ բարձունքի վրա, 0,45 - 0,55 մ խորությամբ բացահայտվել են կարասի կտորներ, որոնց մոտ գտնվել են 12

ապակյա ուլունք և երկու բրոնզյա զանգ-կախիկներ (Տախտակ II,5):Այդ շերտի տակ բացվեց մայր հողը. հավանաբար հողահանքի օգտագործման ընթացքում մշակութային շերտի հիմնական մասը ավերվել է:

Ինչպես նշել ենք, կարասային թաղումներ են արձանագրվել նաև Մարտակերտի շրջանի Առաջաձոր ու Հաթերք գյուղերի տարածքում:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Առաջաձոր գյուղի միջնակարգ դպրոցի թանգարանում պահպանվող կարասի բեկորները, որոնք հավաքվել են գյուղի հյուսիսային մասում գտնվող «Պապեն կալ» կոչվող վայրում: «Պապեն կալ» տեղամասից մոտ 50 մ արևմուտք ընկած տարածքում, ևս հողային աշխատանքներ կատարելու միջոցին թաղման կարասներ են բացվել: Կարասներ հայտնաբերվել նաև հիշյալ տարածքից 150-160 մ հարավ: Այդ նույն տարածքում մեր կողմից արձանագրվել են հելլենիստական դարաշրջանով թվագրվող խոշոր կարասների բեկորներ:

2006 թ. ԼՂՀ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Փուրճաղակ» տեղամասում Թրղի գետի հունը Սարսանգի ջրամբար տեղափոխելու ընթացքում բացահայտվել են կարասային ու հիմնահողային դամբարաններ: Տեղի զննումը ցույց տվեց որ նշված դամբարանադաշտը պատկանում է հելլենիստական ժամանակաշրջանին: Տեղում հավաքվել են կարասների բեկորներ, ամբողջական սափորներ, կճուճներ, թասեր, երկաթե տեգեր, պերճանքի առարկաներ: Կարասների չափսերը անհնար էր պարզել:

2011 թ. գարնանը, Ստեփանակերտ քաղաքի հարավ-արևմտյան ծայրամասում հողային աշխատանքների իրականացման ժամանակ խաթարվել են երկու կարասային թաղումներ: Առաջին կարասը տեղադրված էր հորիզոնական դիրքում՝ կողմնորոշված հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Կարասի բարձրությունը՝ 135 սմ, ամենալայն մասը՝ 105 սմ, պսակի տրամագիծը՝ 58 սմ, հատակի տրամագիծը `19 սմ, պատերի հաստությունը՝ 3 սմ: Կարասի պսակը ծածկված էր կրաքարե բարակ սալով՝ 58X47 սմ: Համարյա ամբողջական պահպանված կմախքը՝ աջ կողքի վրա խիստ կուչ եկած, ձեռքերը ծալած գլխի տակ, գլուխը կարասի բերանի կողմը, դեմքով դեպի հարավ էր (Տախտակ III,1): Անմիջապես գլխի տակ և վզի հատվածում գտնվել են ապակյա ուլունքներ՝ թվով 90 հատ: Կոնքոսկրի և ծալված ոտքերի արանքում գտնվել են երկու երկաթե նետասլաքներ (Տախտակ III, 2): Կարասի պսակի հարավային մասում դրսից գտնվել է օյնախոյա տիպի միականք սափոր:

Երկրորդ կարասը գտնվում էր առաջին կարասի մակարդակից 80 սմ բարձր և 1, 5 մ հարավ-արևելք: Կարասի բարձրությունը կազմում էր 145

սմ, լայն մասը՝ 106 սմ, հատակի տրամագիծը՝ 19 սմ, պսակինը՝ 38-40 սմ: Կողմնորոշումը նույնն է:

Գտածոների նկարագրումը.

Կարասներ. թաղման կարասները 135-165 սմ բարձրությամբ, հարթ, նեղ հատակով (տրամագիծը 12-19 սմ), ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս լայնացող հորիզոնական և ուղիղ կամ թեք կտրված պսակով (տրամագիծը 35-45 սմ), շուրթի ներքևի մասով ալիքաձև կամ ատամնավոր նախշ է անցնում:

Կարճ վզից անմիջապես անցումը ուռուցիկ իրանին հայտնի է դեռևս մ.թ.ա. VI-IV դդ,, և բնորոշ է դառնում հելլենիստական կարասների համար:[1] Կարասների իրանի ամենից լայն մասով անցնում է ռելիեֆային պարանահյուս զարդագոտի: Նմանատիպ կարասներ հայտնի են Անդրկովկասի մի շարք վայրերից՝ հարավ-արևելյան Վրաստան, Քարտլի, Մինգեչաուր, Արմավիր, Արտաշատ, Գառնի, Օշական և ուրիշներ:[2]

Սափորներ. Միականթ մեծ գունազարդ սափոր Հաթերքից: Գնդաձև իրանով, վիզը գլանաձև երկար, պսակը երեքնուկաձև, դեպի դուրս թեքված շուրթի եզրից իջնում է կտրվածքում կլոր աղեղնաձև կանթ, հատակը հարթ ու նեղ է: Անոթի վզին ուղղահայաց զիգզագաձև նախշեր են արված: Սափորի ուսը զարդանախշված է երեք զուգահեռ կարմիր գծերով: Գունազարդումն արված է բավականին անփույթ, ինչը թույլ է տալիս թվագրել անոթը մ.թ.ա 1-մ.թ. 1 դդ.: Բարձրությունը 56 սմ է, պսակի տրամագիծը՝ 12 սմ, հատակի տրամագիծը՝ 12 սմ (Տախտակ IV, 1):

Առավել հետաքրքիր է փոքր միականթ անոթը, որը գտնվել է Հաթերքում կարասային թաղումից (մ.թ.ա. I դ): Տանձաձև (կոլբայաձև) փոքր միականթ անոթ է, հավանաբար, ծիսական: Երկար աղեղնաձև կանթը սկսում է ուղիղ կտրած պսակից և հասնում ամենալայն մասին (բարձրությունը 18 սմ է, կանթի երկարությունը՝ 10 սմ, պսակի տրամագիծը՝ 2.2 սմ, բերանի բացվածքը՝ 1 սմ): Սափորիկը պատրաստված է դեղին, լավ հունցած կավից: Մինչև թրծումը անոթի ամբողջ մակերեսը պատվել է կարմիր ներկով ու փայլեցվել: Հարթ հատակի վրա արված են 72 փոքր անցքեր (Տախտակ IV, 6): Նմանատիպ անոթներ մեզ հայտնի չեն:

Միականթ երեքնուկաձև պսակով գունազարդ սափոր Հաթերքից (բարձրությունը՝ 27 սմ, լայնությունը՝ 18 սմ, պսակի տրամագիծը՝ 11 սմ, հարթ հատակի տրամագիծը՝ 12 սմ): Պատրաստված է բաց դարչնագույն

---

[1] *Կարապետյան Ի., Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ,,Երևան,2003, էջ 34*

[2] *Древнейшие государства Кавказа и Средней Азии, Археология СССР, Москва, 1985., 54, 58. 90-9,1 с.92.*

մանրահատիկ ավազախառն կավից: Պսակի շուրթը ներկված է կարմիր ներկով, կանթի ներքևի եզրից սափորը բոլորում է 3 կարմիր գծերից բաղկացած գոտի: Սափորը դրսից անգոբապատ է (Տախտակ IV, 2):

Միականթ կլորավուն պսակով, երկար վզով, գնդաձև իրանով սափոր Հաթեքից (բարձրությունը՝ 30 սմ, լայնությունը՝ 22 սմ, նստուկի՝ տրամագիծը 13 սմ, պսակի տրամագիծը՝ 9 սմ): Պատրաստված է բաց դարչնագույն կավից, լավ հունցած, մանրահատիկ, թրծումը հավասար: Կարմիր զույգ գծերով զարդարված է վիզը և կանթը (Տախտակ IV, 3):

Փոքր «օյնոխոյա» տիպի, երկկոն իրանով միականթ սափոր Ճանկաթաղից: Պսակը մի քիչ դուրս է թեքված: Աղեղնաձև՝ կտրվածքում կլոր, կանթը սկսվում է անմիջապես պսակից և իջնում է սափորի ուսին: Բաց վարդագույն ֆոնի վրա բռնակի հիմքից հեռանում են երեք զուգահեռ մուգ դարչնագույն գծեր: Նույն գույնի երկու ուրիշ գծեր զարդարում են սափորի վզի ներքին մասը: Նշված երկու գոտիները միացված են զիգզագաձև գծերով: Անմիջապես պսակի տակ, վզի ճզման տեղը ծեփածո եղանակով երկու կողքից կպցված են մեկական կոճակներ: Փոքր սափորի բարձրությունը՝ 16 սմ, տրամագիծն առավել լայն մասում՝14 սմ, վզի տրամագիծը՝ 6.5 սմ, հատակի լայնությունը՝ 8 սմ: (Տախտակ I, 2):

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Արցախի պետական թանգարանում պահպանվող անոթները: Առաջինը, մեծ «օյնոխոյա» տիպի միականթ սափորը (բարձրությունը՝ 34 սմ, լայնությունը՝24 սմ, հատակի տրամագիծը՝ 17 սմ, պսակի տրամագիծը՝11 սմ): Հարթ հատակով այս սափորը պատրաստված է խոշորահատիկ ավազախառն, վատ հունցած, անհավասար թրծած դեղնավուն կավից: Սափորի վիզը երկարավուն է, իրանը համարյա գնդաձև: Հայտնաբերման վայրը անհայտ է:

Մյուսը՝ փոքր «օյնոխոյա» տիպի սափորը, գտնված է Ստեփանակերտում (բարձրությունը՝ 21 սմ, լայնությունը՝ 17 սմ, հարթ հատակի տրամագիծը՝ 10.5 սմ, պսակի տրամագիծը 7, երկարությունը՝ 11.5 սմ): Պսակի շուրթը ներսից և դրսից կարմիր է ներկված, սեղման մասում մեկական կոճակ է արված: Վզով անցնում է գունազարդ գոտի, որը կազմված է երեք շրջանաձև կարմիր գծերից. նրանից 2 սմ ներքև անցնում է ևս մի գունազարդ գոտի՝ 4 կարմիր գծերից: Ամբողջ սափորը անգոբապատ է: Պատրաստված է լավ հունցած, մանրահատիկ ավազախառն, բաց դարչնագույն կավից: Կանթի երկայնքով անցնում են 3 կարմիր զուգահեռ գծեր, որոնք միանում են իրանի գունազարդ գոտուն:

Մեծ «օյնոխոյա» տիպի սափոր՝ բարձրությունը՝ 34 սմ, լայնությունը՝ 24 սմ, հատակի տրամագիծը՝ 17 սմ, պսակի տրամագիծը՝11 սմ: Պսակի

սեղման տեղում մեկական «կոճակ»: Միականթ, հարթ հատակով, խոշորահատիկ ավազախառն, վատ հունցած, անհավասար թրծած դեղնավուն կավից: Սափորի վիզը երկարավուն, իրանը համարյա գնդաձև: Հայտնաբերման վայրը անհայտ է:

Այսպիսով, սափորները ներկայացված են տարբեր տեսակների ու չափսերի. լայնացող իրանով, կարճ վզով, կլոր, սուր կամ երեքնուկի ձև ունեցող պսակով, աղեղնաձև կանթով, որը մի եզրով կպած է պսակին, մյուսով՝ ուսին: Երեքնուկաձև շուրթերով սափորներն իրենց նախատիպերն ունեն ուրարտական խեցեգործության մեջ.[1] Ժ.Խաչատրյանը նույնպես գտնում է որ «օյնոխոյա» պսակով սափորների նախատիպը գալիս է ուրարտական շրջանից, միևնույն ժամանակ չի բացառում նաև հունական ու հելլենիստական ուղղակի ազդեցությունը:[2] «Օյնոխոյա» տիպի պսակով սափորներ հանդիպում են Հայաստանում ինչպես աքեմենյան ու հելլենիստական դարաշրջանում, այնպես էլ ավելի ուշ: Անոթների մակերեսը պատված է բաց կարմրավուն կամ թափանցիկ անգոբով:

Կճուճ. Անկանթ, կարճ վզով, դուրս թեքված պսակով, կլոր շուրթով, մակերեսը դարչնագույն ներկով պատված կճուճ Հաթերքից: Շուրթի եզրից իջնում են ուղղահայաց գծեր, որոնք կճուճի ուսին սահմանվում են հորիզոնական գծով: Կճուճի ամենից լայն մասով անցնում են երեք զուգահեռ գծեր, իսկ երրորդ գծից ներքև իջնում են եռանկյունաձև (սլաքաձև) նախշեր: Գունազարդումը արված է դեղնավուն ներկով: Պատրաստված է վատ հունցած խոշորահատիկ կավից (Տախտակ IV, 4): Զուգահեռներ հայտնի են Արմավիրում[3]:

Հորիզոնական կանթով գունազարդ կճուճ Հաթերքից (մ.թ.ա. I դ.) (բարձրությունը՝ 22 սմ, լայնությունը՝ 19 սմ, հարթ հատակի տրամագիծը՝ 11 սմ, պսակի տրամագիծը՝ 11 սմ): Կանթը ուղղահայաց տեղադրված է լայն մասում: Պսակը կլոր, կլորավուն շուրթը դուրս թեքված, վիզը փոքր, իրանը գնդաձև: Կանթի մակարդակից կճուճը զարդանախշված է 3 կարմիր զուգահեռ գծերից կազմված գոտիով: Վերևի գիծը անցնում է նաև կանթով: Կճուճի ամբողջ մակերեսը անգոբապատ է (Տախտակ IV,5):

Թասեր. Թաս-փիալա. բերանի բացվածքը 14 սմ է(եզրից եզր-15 սմ), հարթ՝ մի քիչ ներճկված հատակի տրամագիծը 8.5 սմ է, խորությունը 5

---

[1] *Пиотровский Б., Кармир – Блур II.Результаты раскопок 1951-1953 гг. Ереван, 1955, с. 51; Мартиросян А., Аргиштихинили. Ереван, 1974, с.96*

[2] *Խաչատրյան Ժ. Արտաշատ II. Անտիկ դամբարանադաշտ / 1971-1977 թթ. պեղումները/ Եր.,1984,էջ 38, Тирацян Г., Древнеармянская керамика из раскопок Армавира (Опыт классификации и датировки), с.216*

[3] *Тирацян Г., Древнеармянская керамика из раскопок Армавира (Опыт классификации и датировки)." ИФЖ", 1971, 1, с.216*

սմ: Ներս թեքված և ուղիղ կտրած շուրթը ներկված է կարմիր գույնով, կողերի վերին մասը զարդարում են 2 սմ երկարությամբ սեպաձև թեք գծերը: Պատրաստված է բաց դարչնագույն մանրահատիկ ավազախառն կավից: Թրծումը՝ հավասարաչափ: (Տախտակ V,1):

Թաս-փիալա. բերանի բացվածքը 14 սմ, հարթ՝ մի քիչ ներճկված հատակի տրամագիծը 8 սմ է, խորությունը՝ 4 սմ: Շուրթը կլորավուն ներս թեքված: Անոթը դրսից ներկված է կարմիր ներկով, պատրաստված է բաց դարչնագույն մանրահատիկ ավազախառն կավից: Թրծումը՝ հավասարաչափ(Տախտակ V, 2):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հաթերքում գտնված գունազարդ պնակը: Նման անոթներ հայտնի են Արտաշատից,[1] Գառնիից,[2] Դվինից[3] և թվագրվում են մ.թ.ա. I դարով:

Պնակը պատրաստված է բաց դարչնագույն՝ լավ հունցած կավից, հաստապատ: Պնակի ներսում համակենտրոն շրջաններ են արված: Դրանք բաժանված են հետևյալ մասերի՝ կենտրոնում 3 փոքր շրջաններ՝ մեկը մյուսից մի քիչ մեծ: Հաջորդ գոտին բաղկացած է ևս 3 գծերից կազմված գոտիով, ընդ որում դրսի գծի վրա տեղադրված են ոճավորված ծառեր (10 հատ՝ խմբավորված երկու-երկու): Եվս 3 շրջանաձև գծեր կազմում են հաջորդ գոտին, որի վրա տեղադրված են 4 խումբ ուղղագիծ պատկերված զիգզագաձև գծեր, որոնք իրարից բաժանվում են մեկական ոճավորված ծառերով, դրանցից վերև սկսվում է մի նոր գոտի՝ բաղկացած արդեն 4 կարմիր գծերից: Եվ ի վերջո, դեպի ներս կլորացող շուրթը ներսից ու դրսից կարմիր նախշ ունի: Պնակի կողերը, աստիճանաբար թեքվելով, բարձրանում են: Պսակի տրամագիծը 31 սմ է, հարթ հատակինը՝ 28 սմ, բարձրությունը՝ 2.5 սմ (Տախտակ V,3):

Այսպիսով, կարասային թաղումներում հայտնաբերված խեցեղենը հիմնականում ներկայացված է գունազարդ փայլեցված տեսականիով: Անոթների ձևերը ներկայացված են տարբեր չափերի միականթ և անկանթ սափորներով, թասերով, կճուճներով, պնակներով: Հարդարված են հիմնականում անոթների շուրթերը, կանթերը, իրանների վերին մասը: Թասերի մի մասի մոտ հարդարված են ինչպես դուրսը, այնպես էլ ներսի մակերեսը:

---

[1] *Խաչատրյան Ժ., Արտաշատ. Անտիկ դամբարանադաշտեր: (1971-1977 թթ պեղումները), Երևան, 1981, էջ 110; Խաչատրյան Ժ., Կանեցյան Ա. Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, «ԼՀԳ»,1974, N 9, էջ 82*

[2] *Аракелян Б., Гарни I, результаты работ 1949-1950 гг.,Ереван, 1951, с.41, рис.28.*

[3] *Քոչարյան Գ., Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը, «ԼՀԳ»,1974, N 5, էջ 91-92:*

Անոթների արտաքին մակերեսը պատված է դեղնաշագանակագույն, կարմրաշագանակագույն անգոբով, մանրակրկիտ փայլեցված են, ապա զարդանախշված: Զարդանախշը երկրաչափական ու բուսական է:

Երկրաչափական նախշերը ներկայացնում են մի քանի հորիզոնական, երբեմն էլ ուղղահայաց, ուղիղ և ալիքավոր գոտիներ, եռանկյուններ, մի կետից ելնող ճառագայթներ, շեղ շարված գծիկներ, ցանցեր (Տախտակ V, 5):

Բուսական նախշերը ներկայացնում են ծաղկաթերթիկ, ծառի ճյուղ, ծառ, եղևնազարդ և այլն:

Հաճախ են հանդիպում կանթերի և սափորների շուրթերին ամրացված վերադիր կոճակներ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում գունազարդ սափորների բեկորները: Դրանք երեսպատված են բաց գույնի ներկով և պատկերազարդված մուգ դարչնագույն, դարչնագույն, շագանակագույն գույներով: Ուսումնասիրողների կարծիքով գունազարդման տեխնիկան Հայաստանում, ինչպես նաև հարևան երկրներում հայտնի է դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում, իսկ բաց ֆոնի վրա կատարված զարդանախշերով խեցեղենը լայն տարածում է ստանում սկսած մ.թ.ա. III դ.:[1]

Ճանկաթաղի և Հաթերքի նյութերը, գունազարդ անոթների մակերեսը լրիվ, մեկ կողմը, կամ անոթի վերին մասը պատած է բաց դարչնագույն, դարչնագույն, բաց կարմիր, գորշ քսուկով: Նույն երանգներով են պատված Տիգրանակերտի հելլենիստական անոթների բեկորները: Հիմնականում փայլեցված են զարդարված մասերը, որը ուշ հելլենիստական խեցեղենի բնորոշ գծերից մեկն է:[2]

Քննությունը ցույց է տալիս, որ Արցախի կարասային թաղումներից հայտնաբերված խեցեղենը իր բոլոր տարատեսակներով կազմում է Հայաստանի հելլենիստական խեցեղենի անքակտելի մասը:

---

[1] *Խաչատրյան Ժ., Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ (մ.թ.ա. V-մ.թ. I դդ), «ՊԲՀ», 1966, h.1, էջ 257-258:*

[2] *Խաչատրյան Ժ., Արտաշատ II. Անտիկ դամբարանադաշտ/1971-1977 թթ. պեղումները/ Երեւան,1984, էջ 98:*

Տախտակ I

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Տախտակ II

Նկ. 1

Նկ. 2

Տախտակ III

Նկ. 1



Նկ. 2

Նկ. 3

Տախտակ IV

Նկ. 1

Նկ. 2 Նկ. 3.



Նկ. 4



Նկ. 5

Նկ. 6

Տախտակ V

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

ПЕРВАЯ ПОПЫТКА ИЗУЧЕНИЯ КУВШИННЫХ ПОГРЕБЕНИЙ АРЦАХА

Вардгес Сафарян

Резюме

В статье, на основе исследования материалов кувшинных погребений, обнаруженных на територии сел Атерк, Чангатах Мардакертского района НКР, а также в г. Степанакерте, делается вывод о том, что они составляют часть эллинистической культуры Армении.

THE FIRST EXPERIENCE OF STUDYING ARTSAKH'S PITCHER BURIALS.

Vardges Safaryan

Summary

In the article, based on the research materials of pitcher burials discovered on the territory of the villages of Haterk and Changatagh in Martakert region, NKR, as well as in Stepanakert, we come to the conclusion that they form part of the Hellenistic culture of Armenia.